

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/1

10 մարտի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Հրանտ Վարդանյանի բողոքը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 23.12.2014 թ-ի թիվ 367 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Հրանտ Վարդանյանը, համաձայն 22.06.2013 թ-ին կնքված «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի» պայմանագրի, Աննա Խաչատրյանից գնել է «KAMAZ 5511» մակնիշի բեռնատար ինքնաթափ (այսուհետ նաև տրանսպորտային միջոց):

Նշված առուվաճառքի պայմանագրի կնքումից հետո, պայմանագրի 3.2.1 կետի համաձայն տրանսպորտային միջոցը հանձնվել է Հրանտ Վարդանյանին: Սակայն տրանսպորտային միջոցի շահագործման արդյունքում պարզվել է, որ դրա տեխնիկական վիճակը չի համապատասխանում պայմանագրի 3.3.4 կետով սահմանված պայմաններին: Հաշվի առնելով նշված հանգամանքը կողմերի միջև ձեռք է բերվել փոխադարձ համաձայնություն տրանսպորտային միջոցը հետ վերադարձնելու և վճարված գումարը հետ ստանալու վերաբերյալ: Սակայն տրանսպորտային միջոցը հետ վերադարձնելու գործարքն իրականացվել է կողմերի միջև 12.07.2013 թ-ին «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի» պայմանագիր կնքելու միջոցով:

Այսուհետև 25.07.2013 թ-ին Հրանտ Վարդանյանը վաճառել է 24.09.2012 թ-ին ձեռք բերված մեկ այլ տրանսպորտային միջոց:

Տվյալ դեպքում գործում առկա ապացույցներից հետևում է, որ Հրանտ Վարդանյանի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում իրականացվել է նույն տեսակի երկու և ավելի թվով անգամ գույքի (ավտոմեքենայի) օտարում, ընդ որում երկրորդ օտարումը համարվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված ապրանքի մատակարարում և ենթակա է հարկման ավելացված արժեքի հարկով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի կողմից 23.12.2014 թ-ին կայացվել է թիվ 367 որոշումը Հրանտ Վարդանյանից 2.439.542 դրամ ԱԱՀ-ի գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ Հրանտ Վարդանյանի կողմից Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանին է ներկայացվել հայցադիմում՝ իր և Աննա Խաչատրյանի միջև 12.07.2013 թ-ին կնքված «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի» պայմանագրի նկատմամբ առաջին և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, որը դատարանի 21.11.2014 թ-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ դատարանի վարույթում է գտնվում 12.07.2013 թ-ին կնքված «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի» պայմանագրի նկատմամբ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին գործ, որի հետևանքով անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, հետևապես ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Հրանտ Վարդանյանի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ու մ է՝

Հրանտ Վարդանյանի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ